

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԱՄՏԻ ՄԱՍԻՆ

Գրախոսվող աշխատությունը մասնակցում է միութենական հանրապետությունների ազգային եկամտի հաշվառքի մեթոդաբանության և մեթոդիկայի հետ կապված բանավեճին: Ըստ էության այդ վեճերը հանդում են երկու դրույթի: Տնտեսագետների մի մասը գտնում է, որ հանրապետության շրջանակներում արտադրված ազգային եկամտի ծավալը ճիշտ որոշելու համար, դրա մեծությունը պետք է ավելացնել տվյալ վայրում իրացվող ապրանքներից գանձվող շրջանառության հարկը, իսկ մյուսները պնդում են, որ ազգային եկամտին պետք է ավելացնել շրջանառության հարկի չափը՝ արտադրանքի թողարկման վայրում:

Քննադատելով այս կոնցեպցիաների միակողմանականությունը, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ ներկայումս ՍՍՀՄ Պետպլանը և Կենտրոնական վիճակագրական վարչությունը միութենական հանրապետություններում արտադրված ազգային եկամտի հաշվառքի համար կիրառում են միասնական սկզբունք և եղած տարաձայնությունները հաղթահարված են:

Հեղինակի կողմից տվյալ պրոբլեմի մշակմանը նպաստող որոշ առաջարկություններ արժանի են ուշադրության: Այսպես, 19—21 էջերում բերվում են երկու աղյուսակներ: Առաջինում բացահայտվում է շրջանառության հարկը՝ ըստ զուտ արդյունքի համամասնորեն բաշխելու ոկզբունքը, որ առաջարկում են որոշ տնտեսագետներ, երկրորդում հիմնավորում է իր առաջարկությունը հավելյալ արդյունքն աշխատավարձի ֆոնդի նկատմամբ համամասնորեն բաշխելու մասին: Հաշվառքները ցույց են տալիս, որ հեղինակի առաջարկած մեթոդիկան հարաբերականորեն ճիշտ է արտացոլում ազգային եկամտի մեծությունը, որովհետև այդ կերպ համահարթվում են հավելյալ արդյունքի նորմաների մեծ անհամաչափությունները ըստ ճյուղերի, որ պահպանվում է առաջին մեթոդի կիրառման դեպքում:

1 Э. Д. Матевосов, Национальный доход и его использование в Армянской ССР. Издательство Академии наук Армянской ССР, Ереван, 1968, 192 стр.

Ազգային եկամուտն օգտագործվում է ժողովրդական տնտեսության ընդլայնված վերարտադրության, կուտակման և սպառման համար: Այստեղից հետևում է, որ այդ երկու մեծությունների միջև սոցիալիզմի պայմաններում կա որոշակի, ոչ հակամարտ, հակասություն: Այս հակասությունը, — նշում է հեղինակը, — հաղթահարվում է նրանով, որ պլանավորման միջոցով, յուրաքանչյուր տվյալ էտապում, սահմանվում է ազգային եկամտի այդ երկու մեծությունների համար օպտիմալ հարաբերակցություն: Օպտիմալությունը կուտակման և սպառման ֆոնդերի աճի համար այնպիսի տեմպեր պետք է ապահովվի, որոնք կպայմանավորեն ժողովրդի կենսամակարդակի զգալի բարձրացում՝ կուտակմանը զուգահեռ:

Հեղինակն իրավացի է, երբ ընդգծում է, որ կուտակման և սպառման տեմպերի հարաբերակցությունը մշտական չէ, այն փոփոխվում է, այդ հարաբերակցության օպտիմալության կատարելագործման անհրաժեշտությունից ելնելով: Սոցիալիստական կուտակմամբ Հայկական ՍՍՀ արդյունաբերության աճին արագ թափ է հաղորդվել, այն գերազանցում է ՍՍՀՄ միջին-ցուցանիշները: Նույնը կարելի է ասել ազգային եկամտի աճման տեմպերի մասին: Սակայն, ընդամենը այս բոլորին, հեղինակը գտնում է, որ Հայկական ՍՍՀ-ում մեկ շնչին ընկնող արտադրվող ազգային եկամտի աճի ցուցանիշը ետ է մնում Միության համապատասխան ցուցանիշներից: Գրքում թվարկվում են այս ցուցանիշը պայմանավորող գործոնները՝ արտադրության կառուցվածքի առանձնահատկությունները, աշխատանքի արտադրողականության մակարդակը, բնակչության զբաղվածության աստիճանը, արտադրական և ոչ արտադրական ոլորտների հարաբերակցությունը, բնակչության աճի տեմպերը և այլն:

Կուտակման աղբյուրը հավելյալ արդյունքն է, նրա երկու հիմնական ձևերով՝ շրջանառության հարկը (կենտրոնացած զուտ եկամուտ) և շահույթը (ձեռնարկության զուտ եկամուտը): Գրքում բացահայտվում են այս կատեգորիաների դերն ու նշանակությունը սոցիալիստական կու-

տակման բնագավառում: Հատկապես ընդգծվում է շահույթի աճող դերը սոցիալիստական կուտակման արդյունավետության բարձրացման տեսանկյունից: Շահույթի աճող դերը կուտակման բնագավառում դիտվում է տնտեսական սեփականության կյանքում: Ընդգծվում է, որ շահույթի հաշվին տնտեսական խթանման ֆոնդերի ստեղծմամբ ձևավորվում են հարավորություններ են ստեղծվում լրիվ տնտեսական կիրառման համար: Կատարվում է կուտակման ֆոնդերի դասակարգում: Սակայն, մեր կարծիքով, կուտակման ֆոնդի դասակարգման երկրորդ սխեման զիտականորեն ավելի հիմնավորված է, քան առաջինը: Վերջինում խոսվում է նաև սպառվող գույքի մասին, որպես կուտակման տարր: Ակնհայտ է՝ ինչ որ հատկացված է սպառման համար, միաժամանակ չի կարող կուտակման աղբյուր հանդիսանալ:

Կուտակման ֆոնդի, ըստ կառուցվածքի, դասակարգման 2-րդ սխեմայի առավելությունն այն է, որ այստեղ կուտակման էությունը բնութագրող տարրերը ներկայացված են արտադրական (և ոչ արտադրական) կուտակումներով և արտադրական ռեզերվների պաշարներով:

Հայկական ՄՍՀ ազգային եկամտի օրինակով ցույց է տրված, որ կուտակման պրոցեսում գերակշռող տեղը պատկանում է հիմնական ֆոնդերին, այդ թվում արտադրական հիմնական ֆոնդերին: Արտադրական (և ոչ արտադրական) կուտակումը գերազանցապես կատարվում է պետական ձեռնարկություններում: Հանրապետության տվյալներով ուսումնասիրվում է նաև՝ շրջանառության միջոցների կառուցվածքը, դրանց տարրերի հարաբերությունները:

Այստեղ կատարվում են քննադատական դիտողություններ շրջանառության միջոցների գերլիմիտային պաշարների առաջացման մասին, կատարվում են առաջարկություններ դրանց օգտագործման կատարելագործման ուղղությամբ: Գրքում խոսվում է կուտակման նորմայի մասին, դրա դինամիկան ուսումնասիրվում է արտադրական (և ոչ արտադրական) ոլորտներում տեղի ունեցող կուտակումների հետ կապակցված: Հեղինակը հանգում է այն հետևություն, որ ընթացիկ հնգամյակում ոչ արտադրական ոլորտի կուտակումների նորմաների աճը գերազանցում է արտադրության ոլորտի կուտակման աճին: Այսպիսով, կուտակման պրոցեսը դիտվում է որպես պլանային պրոցես, որը զիտակցաբար կազավորվում է պլանավորող օրգանների կողմից:

Հեղինակն իրավացիորեն քննադատում է սովետական որոշ տնտեսագետների այն բանի համար, որ նրանք ժխտում են ոչ արտադրական կուտակման դերը սոցիալիզմի պայմաններում:

Գրախոսվող աշխատության մեջ լուսարանվում է նաև ազգային եկամտի սպառման ֆոնդի էությունը, կառուցվածքը և դրա զարգացման օրինաչափությունները սոցիալիզմի պայմաններում:

Գրքում նշվում է, որ սոցիալիստական արտադրության զարգացման զուգահեռ արագ կերպով աճում են այդ ֆոնդերը, աստիճանաբար բարձրանում է բանվորների և ծառայողների աշխատավարձը, կոլտնտեսականների դրամական եկամուտները, աճում են պետության և մյուս կազմակերպությունների կողմից կատարվող հատկացումները սպառման հանրային ֆոնդերի ղեկավարող ստորաբաժանման ճյուղերի արտադրանքի աճի հիման վրա ընդարձակվում է ապրանքաշրջանառությունը, կատարելագործվում է նրա կառուցվածքը: Բնակչության պահանջարկային կառուցվածքը, ապրանքաշրջանառության կառուցվածքում, բարձրանում է բարձրորակ ապրանքների տեսակաբար կշիռը:

Գրքում բացահայտվում են սպառվող ֆոնդի օգտագործման բնագավառում տեղ գտած թերությունները: Կատարվում են առաջարկություններ ապրանքաշրջանառության կառուցվածքի հետագա կատարելագործման, բարելավման ուղղությամբ:

Հեղինակը նշում է, որ սպառման ֆոնդի օգտագործման բնագավառում դեռևս կան ծրագրային նշանակություն ունեցող չլուծված մի շարք պրոբլեմներ՝ քաղաքի և գյուղի սպառման մակարդակների մերձեցումը, սոցիալական տարբերիմների եկամուտների աստիճանաբար համահարթելը, ՄՍՀՄ տարբեր տնտեսական շրջանների կենսամակարդակների միջև եղած տարբերությունների վերացումն և այլն:

Այս պրոբլեմները կլուծվեն հեռանկարային ժամանակաշրջանում, որոնց համար սոցիալ-տնտեսական նախադրյալ է հանդիսանում կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը:

Է. Մաթևոսովի աշխատության մեջ կան նաև որոշ թերություններ: Հեղինակը մի կողմից ապացուցում է, որ իրացման վայրում գանձվող շրջանառության հարկի միջոցով չի կարելի ճիշտ որոշել ազգային եկամտի ծավալը, մյուս կողմից նշում, որ դրա օգտագործելը նպատակահարմար է անհրաժեշտությունը հիմնավորում է: Հեղինակի այս տատանումները բացատրվում են նրանով, որ հետազոտվող պրոբլեմը դեռևս հարկ եղած խորությամբ չի մշակված և պահանջում է նոր որոնումներ:

Հեղինակի մոտ արտադրական և ոչ արտադրական ոլորտների հարաբերակցության հարցում ևս անհետեղականություն է նկատվում: Նա նշում է, որ ՄՍՀՄ-ում արտադրական ոլորտներում աշխատողների տեսակաբար կշիռը բարձր

է, քան Հայկական ՍՍՀ-ում և դա համարում է բացասական երևույթ, իսկ մի էջ հետո գրում է, որ ոչ արտադրական ոլորտներում աշխատողների ցածր տեսակարար կշիռը պետք է համարել դրական երևույթ: Հեղինակը անզգույշ է ձեակերպում ոչ արտադրական ոլորտի համար տեղի ունեցող կուտակման էությունը: Այսպես, նրա կարծիքով ոչ արտադրական ֆոնդերի վերարտադրությունը տեղի է ունենում արտադրությունից դուրս (71—72), որը ճիշտ չէ: Իրականում արտադրության պրոցեսում է տեղի ունենում նաև ոչ արտադրական ֆոնդերի վերարտադրությունը, դրանք ևս հանդիսանում են աշխատանքի արդյունք: Հետևաբար, դրանց աճն արտադրությունից դուրս չի կարելի պատկերացնել: Միանգամայն այլ խնդիր է այն, որ արտադրության պրոցեսն ավարտելուց հետո այդ ֆոնդերը դառնում են տեական սպառման առարկա և իրենց վերարտադրության համարժեքը չեն փոխհատուցում: Ժիշտ արտահայտություն չէ նաև ազգային եկամտի կուտակում արտահայտությունը (69):

Ազգային եկամտի սպառվող մասը չի կարող կուտակման աղբյուր հանդիսանալ: Հեղինակին քաջ հայտնի է, որ սպառման ֆոնդի գերակշռող մասը իրացվում է աշխատավարձի միջոցով, մինչդեռ շարահրդույթյան մեջ մեծ տեղ է տրված

սպառման հանրային ֆոնդերին, իսկ աշխատավարձի կազմակերպման և կարգավորման հարցերն, որոնք անմիջականորեն առնչվում են սպառման ֆոնդի օգտագործման կատարելագործման հետ, չեն մեկնաբանվել:

Սպառման հանրային ֆոնդերի առաջացման աղբյուրի հարցը առ այսօր բանավեճի առարկա է: Ընկ. Մաթեոսովը տվյալ դեպքում վերակրկնել է բանավեճին մասնակցող տնտեսագետների մի խմբավորման տեսակետը, որ իբր հավելյալ արդյունքը ոչ մի առնչություն չունի սպառման հանրային ֆոնդերի կազմավորման հետ: Ըստ որում, նրա քննադատական դիտողություններն այս կապակցությամբ (173, 174, 177) հարկեղած չափով տեսականորեն հիմնավորված չեն:

Սակայն այս և վերը նշված մասնակի թերությունները բնավ բնորոշ չեն գրախոսվող աշխատության համար, ընդհակառակը, հեղինակը կատարել է շնորհակալ աշխատանք, այն օգտակար կլինի ինչպես քաղաքատնտեսության տեսության ուսումնասիրողներին, նույնպես և պրակտիկ աշխատողներին համար:

Հանրապետության վաստակավոր էկոնոմիստ, տնտեսական գիտությունների թեկնածու՝

Գ. Ն. ՍԱՀԱԿՅԱՆ